

Ա Է Ե Տ Ա Բ Ե Բ



«ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ԱՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1894.

ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԵԱՐՄԱՐ ՊԱՏՄՈՒ-
ԹԻՒՆ ՄԸ

Մեծ իմաստութիւն կը պահանջուի քրիստոնէայ ճնողներէ Տէրոջը օրուան մէջ իրենց զաւակաց ինամ տանելու մասին: Սխալ ընթացք է մէկ կողմէն տղան ստիպել այնքան զգուշութեամբ ու խստութեամբ պահելու այդ օրը որ ատէ զայն, և միւս կողմէն զայն ուրիշ օրերու նման համարիլ տալ անոր Տղայք չեն կրնար մէկն եօթներորդ օր թողուլ իրենց աղայական բնութիւնը: Մարմնական մարզանքի և զբօսանքի կը կարօտին. սակայն այն զօսանքները որք անոնց թոյլ տրուելու են իրակի օրերը՝ կրնան այնպիսի բնութիւն ունենալ որ տղայոց մտքին վրայ տպաւորեն թէ այդ օրը սուրբ օր է: Աստուածաշունչը տղայոց ծանօթացնող խաղեր, երգեցողութիւն և օգտակար ու շահեկան գրքերու ընթերցումը ամենէն սովորական միջոցներն են իրակին փոքրիկներուն համար սիրելի օր մը ընելու: Հայրը կամ մայրը տղոց հոգևոր զարգացումը այնքան կարևոր համարելու են որ պատրաստ ըլլան զանոնք բարոյապէս կրթելու և օգտակար կերպով զուարճացնելու նուիրել սուրբ օրուան մէկ մասը զոր պիտի փափաքէին ուրիշ կերպով անցընել: Այս պատկերին մէջ տեսնուող մայրը իր փոքրիկ աղջկան կը կարգայ իրակի օրուան յարմար պատմութիւն մը:



ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԵԱՐՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

ՁՈՒՓԻ ՄԸ ԱՓԻՆ ՄԷՋ

Սկզբնապէս մը վերջերս իր դաշտերուն մէջ պարտաձ միջոցին լսեց ճի-

շերը թռչունի մը որ յուսահատութեան մէջ կը թռէր: Վեր նայելով տեսաւ բազէէ մը սաստիկ հալածուող արտոյտ մը: Բազէն շատ մը ուժգին հարուածներով կը ջանար բռնել արտոյտը: Սա պահ մը յայտնեցաւ անոր յարձակումներէն վրի-

պիլ: սակայն և այնպէս, բազէն հետզհետէ յաղթող կ'ելլէր, և ահաբեկ արտոյտը վարը գտնուող մարդը տեսնելով, նետի նման վար սլացաւ, և թռչտելով՝ ճիշդ անոր ձեռքին մէջ մտաւ և կծկեցաւ դողալով: Չայն հալածողը հետևեցաւ անոր մինչև որ


վեց կանգ ունի չափ մօտեցաւ. սաւ կայն տեսնելով եղածը, սիրտը նեղացած՝ թռաւ գնաց. երբ արտոյար աղատ արձակուեցաւ, վեր սաւառնեցաւ, անտարակոյս եւրախտաղ խտութեան երգ մը երգելով իր աղատիչին:

Ո՛րքան ապահով և երջանիկ էր մահուանէ ազատուող այդ արտոյար. սակայն երբեք չէր ապահով և երջանիկ անոնց չափ որ մեղքէն և Ստանային չարամտութենէն փախած ու ապաստանած են Տէր Յիսուս Քրիստոսի քով: Աստուծոյ նկատմամբ Նա կ'ըսէ. «Բաւ խոտան պիտի չկորսուին, և մէկը իմ ձեռքէս պիտի չյափշտակէ զանոնք»: Իմ Հայրս որ անսկիւն ինձի տուաւ՝ ամենէն մեծ է, և մէկը չկրնար իմ Հօրս ձեռքէն յափըջ տակել:»


Սիրելի տղայք, դուք գտած էք այդ ապաստանարանը: Գիտեք թէ փոքրիկ թռչունը ո՛րքան պիտի վախնար այդ մարդէն ուրիշ ժամանակ, սակայն մեծագոյն վտանգի մը առջեւ իր երկչոտութիւնը յաղթահարուեցաւ իր ստակմամբ, և նա թռաւ միակ ապաստանարանը: Երանի թէ ամէն մէկդ կարենայիք ձեր սրտին խորէն ըսել Յիսուսի, «Քեզի կու գամ պահպանուելու համար:»

ՔՐԻՍՏՈՍ

Քրիստոսանցայի լիճը կը կաղմէ կեդրոն խել մը երկիրներու, ինչպէս՝ Զուիցերիա, Աւստրիա, Պալիէրա, վիրթեմպուրկ և Պաաւն, որոց բոլորն ալ անոր եզերքն են: Հռենոս գետը այս լիճը կը մտնէ անոր հարաւային ծայրէն և անկէ վերստին կ'ելլէ հիւսիսային արևմտեան ծայրէն, մինչ ուրիշ յիսունէ աւելի գետեր ու գետակներ ալ կը թափին անոր մէջ: Քրիստոսանցանուն փոքր քաղաքը կը գտնուի Պաաւնի մէջ, նեղ ջրանցքի մը վրայ որ լճին գլխաւոր մասը կը կցէ անոր հիւսիսային արևմտեան բազուկին հետ: Քաղաքին հնագոյն մասը, որ հաւանօրէն հիմնուած է երրորդ կամ չորրորդ դարուն՝ տակաւին շրջապատուած է իր վաղեմի պարիսպովը: Հօս կը ներկայացնենք քաղաքին ամենէն չափահաս շէնքերէն երկուքը: Մայր եկեղեցին հիմնուեցաւ 1048ին, սակայն վերաշինուեցաւ 1720 դարուն սկիզբները: Եկեղեցւոյն մէջ կան 16 սիւն՝ որոց իւրաքանչիւրը մէյմէկ ամբողջ մարմարիոն են, փառաւոր խորան մը, և



ՔՐԻՍՏՈՍԱՆԿԱՆ ԳՐԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՐԻ ԵԿԵՂԵՑԻ



ՔՐԻՍՏՈՍԱՆԿԱՆ ՄԵՋ ԻՈՐԿՐՈՍՈՆԻ

սրբոց շատ մը նշխարներ: Միւս շէնքը հասարակաց շուկան է, որ ժամանակաւ վանք էր, և անոր սենեակներէն միոյն մէջ կը գումարուէր, 1414էն մինչև 1418, Քրիստոսանցայի հռչակաւոր ժողովը: Այս ժողովը իրեն նախագահ ունէր Սիգիսմունդ կայսրը, և կը բաղկանար 166 իշխաններէ ու կոմսերէ, 20 կարդինաներէ, և 4,711 ուրիշ եկեղեցականներէ: Պաշտօնադուրկ ըլլաւ երեք մրցակից պապերը որ կաթոլիկ քրիստոնէայ աշխարհը կը բաժնէին, և զՄարտինոս Ե. բնորոց իբրև օրինաւոր յաջորդ Սր. Պետրոսի: Սոյն ժողովը նաև մահուան դատապարտեց Յովհաննէս Հուս բարեկարգիչը և փրակացի Հերմինիմուր:

ՔԱՋ ԱՂՁԻԿ ՄԸ

Գաղղիոյ նախագահ Քառնոյի, որ վերջերս վախճանեցաւ, պաշտօնական վերջին գործն էր Պատուոյ շքանշան պատուանշան մը ղրկել ինտիմա նահանգը բնակող ձէննի քերի անուն Ամերիկացի փոքրիկ աղջկան մը:

Անցեալ տարի, քանի մը հռչակաւոր Գաղղիացիներ տանող կառավարմամբ մը մինչ Շիբակոյի Աշխարհահանդէսը կը դիմէր, ձէննի քերի, որ յայնժամ տար տարեկան էր՝ տեսաւ որ կամուրջ մը կ'այլել, և թէ եթէ կառավարմամբ որ մօտեցած էր չկենար՝ ահաբեկ արկած մը պիտի պատահէր: Ասոր վրայ, այս աղջիկը երկամտաբար գծին վրայ վաղեց այնպիսի կէտ մը ուր

բաւական հեռուէն կրնար տեսնուիլ: Յետոյ, առնելով իր կարմիր հանդերձին քղանցքը՝ զայն ետ և առաջ շարժեց երկաթուղոյ գծին վրայ: Յաջողեցաւ ուշք գրաւել կառախումբին որ կայնեցաւ: Անոր մէջ կը գրտնուէին եօթը հարիւր հոգի, որոց շատերը անխուսափելի մահուանէ ազատեցան ճէննիի քաջութեան և արթնութեան շնորհիւ:

Գաղղիացի ճամբորդները երբ Գաղղիա դարձան, այս դէպքը իմացուցին Քառնոյի. և հետեանքը սա եղաւ որ նա այս փոքրիկ քաջ աղջկան զրկեց վերոյիշեալ պատուանշանը, որուն նպատակն է պատուել քաջութիւնն ու արժանիք, ուր որ գտնուին:

ԱՐՄԱՒԵՆԻ ՎՐԱՅ ԵՂՈՂԸ

Արմաւենիի մէկ տեսակը, որ Հընդկաստան կը բուսնի, անուշ հիւթ մը կու տայ որմէ շաքար կը յինուի: Հիւթը կը վազէ ծաղիկները կրող կոթէն որ կը բուսնի՝ կայմի նման և առանց ճիւղի բունին դազաթը, և հիւթը ժողովելու համար օրը երկու անգամ ծառին վրայ ելլելու է: Ծառը ելլողը պարտի ունենալ մեծ ոյժ ու զգուշաւորութիւն, և ընելու է յարատե վարժութիւն: Հիւթը ձեռք բերելու համար գործածուած ամանները, դանակը, և փայտէ ազգանները՝ (կէրտի) մէջքի հանդերձին կը կապուին, որովհետեւ ձեռքերը պէտք են ծառը ելլելու համար: Ծառը ելլողին կինը լաւ մը կ'եռացնէ հիւթը և կը յինէ շաքար զոր չուկայ կը տանի ծախելու:



ԱՐՄԱՒԵՆԻ ՎՐԱՅ ԵՂՈՂԸ

ԹԷՒՆՉՊԵՍ ԹԱՋՈՂԵՑԱՒ ԽԵՂՃ ՏՂԵԿ ՄԸ

Տղայք երբեմն կը կարծեն թէ շարժեր փութաջան և հաւատարիմ ըլլալ փոքր բաներու մասին: Պատմութիւն մը կը պատմուի այս հանգամանքներն ունեցող տղու մը և անոր փութաջանութեան ու հաւատարմութեան հետեանքին վրայով:

Քանի մը ասրի առաջ Նիւ Եօրք քաղաքին մէջ շրջապատէր մեծ վաճառատուն մը ծանոց թէ տղայ մը կ'ուզէ: Յաջորդ օրը վաճառատունը լեցուեցաւ փափաքողներով: Ինչո՞նց մէջ կար տարօրինակ երևոյթով փոքրիկ տղայ մը որուն կ'ընկերանար կին մը որ յետոյ գիտցուեցաւ թէ անք մօրաքոյրն էր, և հող կը տանէր արդ տղեկին, վասն զի անոր ծնողները լքած էին զնա: Վաճառականը այս խեղճ տղուն վրայ նա յերով ըսաւ, «Չեմ կրնար առնել

զնա. պարապ պաշտօն չկայ. ասկէ դատ, շատ պզտիկ է:»

«Գիտեմ որ պզտիկ է», ըսաւ այդ կինը, «սակայն փութաջան է և հաւատարիմ:»

Տղեկին աչքերուն մէջ կար փայլ մը որ դարձեալ խորհիլ տուաւ վաճառականին: Վաճառատան մէկ բաժանորդը ըսաւ, «Չեմ հասկնար թէ այսպիսի տղուն ինչին կը հաւնուի թիզ մը հասակ չունի:» Սակայն խորհրդակցութենէ ետեւ տղան գործի դրուեցաւ:

Քանի մը օր ետքը վաճառատան մէջ աշխատող բոլոր տղոց ըսուեցաւ թէ իրենցմէ մէկը ամբողջ գիշերը վաճառատան մէջ կենալու է: Վերոյիշեալ փոքրիկ տղան անմիջապէս հաւանեցաւ, մինչ բոլոր միւսները կը դժկամակէն չէին գիշերին, վաճառականը վաճառատունէն ներս նայեցաւ տեսնելու թէ ամէն բան ի կարգին է, և գտաւ որ այս փոքրիկ պաշտպանեալը

պիտակ (կէրտի) կտրելու զբաղած է:

«Ի՞նչ կ'ընես», ըսաւ անոր, «քեզի չըսի որ գիշերներն ալ աշխատիս:»

«Գիտեմ որ չըսիր, սակայն խորհեցայ թէ պարապ կենալուս՝ բան մը ընեմ:» Առաւօտուն դանձապետը սա հրամանն ընդունեց, «կրկնապատկէ այդ տղուն թոշակը, վասն զի փութաջան է իր գործին մէջ:»

Քանի մը շաբաթ ետքը վայրէ կենդանեաց ցուցահանդէս մը տեղի ունեցաւ փողոցներուն մէջ, և բնականաբար վաճառատան բոլոր մարդիկը դուրս վազեցին դիտելու վայրի կենդանիները: Գող մը, առիթ գտնելով, ետեւի դռնէն ներս մտաւ բան մը գողնալու, սակայն ակնթարթի մը մէջ գտաւ որ վաճառատան փոքրիկ գրագիրը ամբողջ մը բռնած է զինք. և փախչելու ապարդիւն ջանքեր ընելէ ետեւ ձերբակալուեցաւ: Այսպէս, ոչ միայն այդ վաճառատան մէջ գողութիւնը արգելուեցաւ, այլ նաև յերևան

երան ուրիշ վաճառատուններէ գողցուած արժէքաւոր նիւթեր ալ : Երբ վաճառականը այս փորձիկ տղուն հարցուց թէ ինչու վաճառատունը կեցաւ հակողութիւն ընելու, մինչ բոլոր միւսները իրենց գործը թողուցին՝ նա պատասխանեց .

«Իրուն ինձի ըսիր որ երբեք չմեկնիմ վաճառատունէն երբ միւսները բացակայ կը գտնուին, և խորհեցայ թէ հոն կենալու եմ :» Անմիջապէս դարձեալ հրաման տրուեցաւ գանձապետին . «Կրկնապատկէ այդ տղուն թոշակը, վասն զի փութալան է և հաւատարիմ :»

Այսօր այս տղան այդ վաճառատան մէկ անդամն եղած է :

ԿԱՏՈՒ ՄԸ ԵԿԵՂԵՑՈՒՑ ՄԸ
ՉԱՆԳԱԿԱՏԱՆ ՎՐԱՅ ԿԸ ՄԱԳԼՅԻ

Ամառուան գեղեցիկ իրիկուն մը պողոտաները լեցուած էին եկեղեցի դիմողներով : Անկիւն մը կայներ էին քանի մը հոգի որք կը թուէր թէ երկինք կը նայէին : Շուտով ուրիշներ ալ գացին անոնց քով, մինչև որ այնքան մեծ բազմութիւն մը հաւաքուեցաւ հոն որ ձամբան գոցուեցաւ : Շատ չանցած, փողոցին վրայ նայող պատուհանները գլուխներով լեցուեցան, և քանի մը հոգի տեսնուեցան շրջակայ տուններուն տանիքներուն վրայ :

Ի՞նչ կը կարծէք թէ կը տեսնէին : Մեղմ իրիկուան օդը ճեղքող եկեղեցւոյ բարձր զանգակատան դազածին մօտերը, դուրս ցցուող զարդի մը փակած էր սև կատու մը, իր սիրելի կեանքը ազատորէն համար : «Ի՞նչպէս հող ելաւ այդ կատուն :» Եր անաջին հարցումը գոր ըրաւ ամէն մարդ, և յայտնուէր էր, «Ի՞նչպէս պիտի իջնէ :» Երեղձ կատուն վար կը նայէր, և ստէպ կը հանէր ողորմելի ձայներ որովք կարծես թէ վարը գտնուողներուն օդնութիւնը կը լսնդէր : Անգամ մը սահեցաւ և ինկաւ զանգակատան հակեալ կուշտէն վար, և ցաւազին աղաղակ մը հանեց ամբողջ որ հիմա վերջին աստիճան հետաքրքիր էր գիտնալ թէ ինչ պիտի պատահէր կատունին : Բարեբաղդապէս կատուն թաթերովը զանգակատան վրայ ուրիշ դուրս ցցուած մաս մը բռնեց, և վայրկեան մը ապահով էր :

Դիտողներէն մէկ քանին թելադրեցին որ հրացանով զարնուի և ազատուի աւելի սոսկալի մահէ որ կարծես անխուսափելի էր : սակայն մէկը չյօժարեցաւ զարնել զայն : Շատ չանցած կատունին փակած կէտէն քիչ մը վերը գտնուող փողը պատուհան մը բացուեցաւ : Երկու տղայք որոշած էին ազատել կատուն, զէպի զանգակն առաջնորդող սանդուխէն վեր ելան, յետոյ ուրիշ սանդուխով մը այդ պատուհանը հասան : Յետոյ տեսնուեցաւ որ տղայք զանգակատան կուշտէն կողով մը վար իջեցուցին : Կատուն անձկանօք դիտեց զայն մինչ կամաց կամաց իրեն կը մօ-

տենար : Երբ իրեն շատ մօտ եկաւ, զգուշութեամբ թաթը երկնցներով կողովին եղբրքէն բռնեց, ապա նոյնչափ զգուշութեամբ նոյնը ըրաւ միւս թաթովը, յայնժամ մեծ ճիգով կողովին մէջ նետուեցաւ և ողջ առողջ գէպի պատուհանը քաշուեցաւ վարը գտնուող հանդիսատեսներուն բունն ծափահարութեանց մէջտեղ :



ԱՂ ԶԿՐՆԱՐ ԴԱՐՄԱՆՈՒԻԼ

«Շատ դժուար է կարկտել այդ տեղը», ըսաւ կոչկակար մը Յակոբիկին որ ոտքը վեր առած էր, իր կօշիկին կուշտը ճեղքուած մը ցուցնելու :

«Ինչու . ամէն բան կրնայ կարկտուիլ, դարմանուիլ», ըսաւ Յակոբիկի զուարթութեամբ :

«Ո՞ր սորվեցար ատիկա, Յակոբիկ», հարցուց կոչկակարը քիչ մը խառութեամբ :

«Փութ, յաճախ լսած եմ զայն . գրեթէ առածի կարգ անցած է :»

«Այո, սակայն սուտ առած մըն է :»

«Ինչէ՞ն դիտես», հարցուց Յակոբիկ, որ իր սրամտութեան վրայ մեծ համարում ունէր :

Կոչկակարը ակնոցը ճակատը հրեց, քանի մը վայրկեան պատանիին երեսը նայեցաւ, և ըսաւ . «Յակոբիկ, լսեցիր անցեալ օր կախուող մարդուն վրայով :»

«Այո», պատասխանեց տղան, «լսեցի, բայց հայրս չթողուց որ անոր վրայ գորղ լրագիրը կարդամ, ոչ ալ թողուց որ կախուելու տեսարանին պատկերը տեսնեմ :»

«Հայրդ բողբոջին իրաւունք ունէր : Տղայք պէտք չէ որ կարգան ապստի լուրեր, որ շատ գէշ կ'ընեն կարդալը : Սակայն սաչափը բողբոջ ալ գիտնալու են . Կախուող մարդը անտեսօք իրականօրեայ դպրոց կ'երթար և ունէր բարի մայր մը որ կը ջանար ողիղ ճամբուն մէջ դնել զիս : Սակայն քիչ ատենէն սա իր մօրմէն իմաստուն համարեցաւ ինքզինքը : Ոգելից ըմպելի կը խմէր, պարապ կը պտտէր և կը գողնար . և երբ խանութ մը ծակած մտած ատեն բռնուեցաւ զինք տեսնող մարդը սպաննեց : Յայնժամ իրեն համար անկարելի էր իր ըրածը դարմանել : Դատուեցաւ, յանցաւոր ելաւ, և կախուեցաւ :»

«Մտ ատանկ է», ըսաւ Յակոբիկ . «սակայն անշուշտ չես կարծեր որ օր մը մարդ պիտի սպաննեմ, այնպէս չէ :»

«Արդարեւ, չեմ յուսար . սակայն այդ մարդասպանը երբեք չէր գիտեր թէ այդպիսի բան մը պիտի ընէր :»

«Ոչ, չեմ կարծեր թէ գիտէր : Բայց գիտես որ ես չեմ խմեր :»

«Ո՞րքայն եմ որ չես խմեր, սակայն ուրիշ ծուռ բաներ կան որ կ'ընես : Երգում ըրիր հոս գալէդ առաջ, և ես լսեցի :»

«Իրան, լսեցիր : Միշտ չեմ երգնուր . սակայն Պարոն Գրիգոր չափազանց գրգռեց զիս :»

«Այդ երգումը ետ կրնամ առնել :»
«Ոչ, բայց ատկէ ի՞նչ կ'ելլէ :»
«Աստուած մեր ամէն ըրածը դատաստանի պիտի բերէ : Հիմա կրնաս դարմանել քու ծուռ ընթացքդ : Աստուած հիմա մեղքերդ պիտի ներէ քրիստոսի համար, եթէ լսնդրես Անկէ : Սակայն գիտցած ըլլաւ որ ժամանակ մը պիտի դայ երբ ալ անկարելի պիտի ըլլայ քեզ ծուռ ընթացքդ դարմանել :»



ԿՈՅՐ ԳԱՆՆՈՒԿ ՄԸ

Բարեկամ մը պատմութիւն մը կ'ընէ իր դիտած մէկ ոչխարին վրայով մայր երկուորեակ գառնուկներու, որոց մին շատ տարբեր կ'երևէր միւսէն . աննպատակ հոս կը կրթափառէր փոխանակ հօտին հետ միւսին քովէն քալելու : Շուտով հասկըցուեցաւ ասոր պատճառը . կոյր էր : Անոր մայրը և եղբայրը լաւ գիտէին զայս, և իր վրայ կը հակէին գորովալի և անդուլ հոգածութեամբ : Երբ որ վտանգաւոր տեղեր երթալու վրայ կ'ըլլար անոնցմէ մին իր քով կը վագէր, և բուն ու բարեմիտ խելակումով (ի՞նչ էրբ՞ով) մը վտանգաւոր ճամբէն կը հանէր ու ապահով ճամբուն մէջ կը դնէր զայն :

Անտարակոյտ, մեր Տէրոջ հօտին մէջ ալ կան քանի մը կոյր գառնուկներ որ կուրօրէն հոս և հոն կը թափառին, չգիտնալով թէ ո՞ւր պիտի երթան կամ ինչ պիտի ընեն : Անկարող են իրենք զիրենք առաջնորդելու, և երթակայ են երթալու վտանգաւոր ու չար ճամբաներու մէջ : Այսպիսի գառնուկներ, եթէ հօտին մէջ մնալու և գայլերուն դէմ պահպանուելու են, պարտին միշտ հակուիլ և երբեմն երբեմն ալ քիչ մը խեղճուիլ : Թերեւս ամարդի և սնդուի թուի կոյր գառնուկներ խեղճուիլ, սակայն այս դործը պէտք է կատարուի, եթէ ոչ գառնուկները կը մոլորին, կը կորսուին և կը փճանան : Երբեմն բուն խեղճուումը կրնայ խիստ թուիլ, սակայն հարկ անհրաժեշտ է, և ի սրբոյ շարժեալ կը կատարուի, թէ և անհանոյ թուի :

Իրաւունք չունիք թողուլ որ մարդիկ ծուռ ճամբաներ երթան, եթէ կրնանք արգելել զայն . սակայն, զանոնք ետ բերելու գործը կատարելու ենք իմաստութեամբ, սիրով և քաղցրութեամբ : Աստուած մեզ ստեղծած է իրարու օգնելու համար : Այս է աշխարհիս մէջ մեր մեծ գործը : Չայն կատարելու ենք յօժար սրտով, և Անոր ոգիով որ քրիստոս աստուորութիւն ընդունեցաւ, որով որպէս սաւորուիւն ընելու :



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի. ՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՆՈՐ ԳՕՑԱՅԱՆՆԸ